Ճգնաժամային արձագանք.
Մեծահասակների կրթության և ուսումնառության դերը կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարում

Աշխարհի բոլոր հասարակությունները մեծապես տուժել են կորոնավիրուսից (COVID-19): Տուժել է մարդկանց առօրյա գործունեությունը և նրանք անհանգստացած են իրենց առողջության, աշխատանքի և բարեկեցության համար: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում երիտասարդների և մեծահասակների կրթություն տրամադրողները ստիպված են փակել իրենց հաստատությունները, ինչն իր բացասական հետևանքներն ունեցավ այդ հաստատությունների կայունության, այնտեղ դասավանդողների և, որ ամենա կարևորն է՝ նաև, ուսումնառողների վրա: Միաժամանակ, մեծահասկաների ուսումնառությունն ու կրթությունը (ՄՈՒԿ) կարող են նպաստել ճգնաժամի հետևանքների մեղմացմանը, առաջարկել խիստ անհրաժեշտ կրթությունն ու դասընթացներ և նպաստել սոցիալական գործունեությանը:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը, լինելով ՄՈՒԿ զարգացման ոլորտում եզակի գործընկեր, առաջարկում է հայեցակարգեր, թե մեծահասակների կրթությունն ու ուսուցումը ինչպես կարող է նպաստել ճգնաժամի հաղթահարմանը սոցիալական և կրթական ծառայությունների միջոցով, հատկապես խոցելի խմբերի համար: Միաժամանակ, մենք կոչ ենք անում կառավարություններին և միջազգային դերակատարներին ՄՈՒԿ տրամադրողներին՝ պետական, մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և անհրաժեշտության դեպքում նրանց անձնակազմերին, ապահովել այն բոլոր ռեսուրսներով, որ անհրաժեշտ են ստեղծված իրավիճակի դեմ պայքարելու համար: Սա բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ պատասխանատվությունն է՝ ապահովել ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների շարունակական հասանելիությունը ճգնաժամի ընթացքում և դրանից հետո:

ՄՈՒԿ ներուժի կիրառումը ճգնաժամի դեմ պայքարում

ՄՈՒԿ-ը կրթության համակարգի ենթաոլորտ է՝ բնութագրիչների այնպիսի համադրությամբ, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն առկա իրավիճակում: Մեծահասակների ուսումնառության ու կրթության տրամադրումը հիմնվում է պահանջարկի վրա, այն ճկուն է, հիմնականում ոչ ֆորմալ, նպատակուղղված է կոնկրետ գործողությունների և իր բնույթով վերափոխող է: ՄՈՒԿ տրամադրողներն ու ծրագրերն ունեն ներուժ՝ տարատեսակ ուղիներով մարդկանց աջակցելու համար, այդ թվում.

- Ներդնել հանրամատչելի առողջապահական կրթություն, օրինակ՝ տեղեկատվական արշավների միջոցով հատկապես մարգինալ խմբերին տեղեկացնել (հնարավորինս պարզ) վարակի և դրանից պաշտպանվելու այն

ուղիների մասին, որոնց պետք է տիրապետեն անհատները, ընտանիքները և հասարակությունը:

- Կազմակերպել եկամտաբեր գործունեության տեսակներ, որոնք կնպաստեն առաջնային անհրաժեշտության այնպիսի սարքավորումների արտադրությանը, ծառայություններին և արտադրատեսակներին, ինչպիսիք են, օրինակ, շնչադիմակները, օճառը և սնունդը:
- Զարգացնել և ապահովել այլընտրանքային կրթության հնարավորություններ՝ լրացնելու ֆորմալ կրթության ծառայությունների ընդհատումները՝ այսպիսով հակազդելով կրթության ճգնաժամի խորացմանը:
- Հնարավորություններ ստեղծել համամարդկային արժեքների՝ համընդհանուր պատասխանատվության, համերաշխության և քաղաքացիական ակտիվության մասին մտածելու համար:
- Մոբիլիզացնել և ուղղորդել համայնքային գործողությունները՝ ելնելով այն իրողությունից, որ ՄՈՒԿ տրամադրողները շատ հաճախ խորքային պատկերացում ունեն տեղական իրավիճակի ու մարդկանց մասին:

Առաջարկությունների մշակում

Ամբողջ աշխարհում գրեթե ամբողջությամբ կասեցված է դասարանային/լսարանային ուսուցման գործընթացը: Արդյունքում, ուսումնառողները հնարավորություն չունեն մասնակցելու հույժ անհրաժեշտ կրթական հնարավորություններին: ՄՈՒԿ առաջարկի տեսանկյունից, ՄՈՒԿ ծառայությունների տրամադրողները և ֆրիլանս դասավանողներ զգալի մասը առերեսվում են ծանր տնտեսական իրավիճակին: Միաժամանակ, ՄՈՒԿ ոլորտի բնույթը՝ իր ճկունությամբ և հստակ ուղղվածությամբ դեպի սովորողների և հասարակության պահանջները, վերջինիս արդյունավետ են դարձնում կրեատիվ և արագ արձագանքի համար, այդ թվում.

- Մասնակիցների համար ընդլայնել թվային ուսուցման հնարավորությունները՝ ներառյալ համապատասխան հարթակների ստեղծումը, դրանցում ոչ ֆորմալ դասընթացների և առցանց (հավաստագրված) դասընթացների առկայությունը:
- Ընդլայնել աջակցությունը սոցիալական մեդիայի գործիքների, ալիքների միջոցով և հեռավար կրթության ավանդական միջոցներով, օրինակ՝ ռադիոկայանների և հեռուստաալիքների հետ համագործակցությամբ:
- Առաջարկել սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ՝ մեծահասակներին օգնելու հաղթահարել ճգնաժամը:

Այս նոր ձևաչափը պահանջում է կոնկրետ ներդրումներ՝ բարենպաստ միջավայրի ստեղծման համար.

- Ներդրում թվային ենթակառուցվածքներում՝ ազգային և տարածաշրջանային ցանցերի, ինչպես նաև տեղական մատակարարների մակարդակում, և թվային

սարքեր տրամադրում խոցելի խմբերի մասնակիցներին, որոնք չունեն այլընտրանք:

- Ներդրում անձնակազմի վերապատրաստման մեջ, որպեսզի նրանք պատրաստ լինեն օգտագործելու թվային տեխնոլոգիաները և աջակցեն ուսումնառողներին:
- Ներդրում ՄԿՈՒ աշխատակիցների, կառավարիչների և դասընթացավարների կարողությունների զարգացման ավելի լայն առցանց հնարավորությունների մեջ:
- Ներդրում տեղական, ազգային, տարածաշրջանային և համաշխարհային պրակտիկ թվային համայնքների ստեղծման մեջ՝ նպաստելով ՄՈՒԿ աշխատակիցների հմտությունների զարգացմանը, փորձի փոխանակմանը և փոխաջակցությանը:

Կառավարություններին և զարգացման գործընկերներին առաջարկվում է աջակցել ՄՈՒԿ ծառայությունների տրամադրողներին՝ թվայնացման հետ կապված ջանքերում:

Ապահովել ՄՈՒԿ կայուն ապագա

ՄՈՒԿ ծառայություններ տրամադրողներից շատերի, եթե ոչ բոլոր համար, սա էքզիստենցիալ ճգնաժամ է: Եկամտի հնարավորությունները գրեթե հավասարվում են զրոյի (մասնակցության վճարների անկում, ծրագրերի ֆինանսավորման ժամանակավոր դադարեցում), շատերը անտանելի ծանր իրավիճակում են: Ամբողջ աշխարհում հասարակությունները և կառավարությունները պետք է նպաստեն ՄՈՒԿ ոլորտի գոյատևմանը: Անհրաժեշտ է անմիջական ֆինանսական աջակցություն:

Ընդունելով ազգային կառավարությունների առաջնային պատասխանատվությունը, կան որոշ բաներ, որ կարող են անել զարգացման գործընները և միջազգային գործակալությունները.

- Աջակցել այն ցանցերին, որոնք ջատագովություն են իրականացնում ճգնաժամի հաղթահարման հանրային ջանքերի ուղղությամբ,
- Աջակցել այն քաղաքականություններին և գործելակերպին, որոնք ճգնաժամը չեն օգտագործում որպես քաղաքացիական հասարակությունը թուլացնելու պատրվակ,
- Ապահովել գոյություն ունեցող կառույցների կողմից կորոնավիրուսի հաղթահարմանն ուղղված գործողությունների իրականացում՝ նոր զուգահեռ մեխանիզմների ստեղծման փոխարեն,
- Առաջարկել ճկուն, հատուկ մշակած այնպիսի ֆինանսական սխեմաներ, որոնք կերաշխավորեն ՄՈՒԿ ինստիտուցիոնալ համակարգի, ՄՈՒԿ մատակարարների և ցանցերի, դրանց հիմնական աշխատակազմի կայունությունը:

Դի-Վի-Վի ինթերնեյշնալը իր հիմնական դերակատարումը տեսնում է գործընկերներին այնպիսի աջակցության տրամադրելու մեջ, որ հնարավոր լավագույն տարբերակով

հաղթահարվի կորոնավիրուսի ճգնաժամը և մշակվեն ՄՈՒԿ ծառայությունների այնպիսի ձևաչափեր, որոնք արդյունավետորեն արձագանքում են այս ճգնաժամին: Մենք մշտապես կտեղեկացնենք մեր գործընկերների կողմից և ծրագրերի շրջանակներում մշակված նորարարական այն նախաձեռնությունների վերաբերյալ, որոնք մատնանշում են, թե ինչպես պայքարել ճգնաժամի դեմ և ինչ աջակցություն տրամադրել մարդկանց: Կորոնավիրուսը գլոբալ ճգնաժամ է, և մենք պետք է ապահովենք, որ պատասխանը լինի համարժեք՝ գլոբալ մակարդակում: